ՀՏԴ : 929: 891.981 Տերյան+891.981(063)
DOI: 10.54503/0135-0536-2025.3-296

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 140-ԱՄՅԱԿԻՆ*

2025 թ. նոյեմբերի 5-ին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում տեղի ունեցավ Վահան Տերյանի ծննդյան 140-ամյակին նվիրված գիտաժողով: Այն կազմակերպվել էր ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ և Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, «Ջավախք» հայրենակցական բարեգործական հասարակական կազմակերպության (ՀԲՀԿ) նախաձեռնությամբ: Գիտաժողովի մեկնարկից առաջ մասնակիցներն ու հյուրերը Կոմիտասի անվան պանթեոնում ծաղիկներ խոնարհեցին Վահան Տերյանի շիրիմին: Այնուհետև Տերյանի ստեղծագործությունները հնչեցին մեծ բանաստեղծի անունը կրող Երևանի թիվ 60 դպրոցի աշակերտների շուրթերով:

Իր բացման խոսքում ինստիտուտի տնօրեն, բ. գ. թ. Հերիքնազ Որսկանյանը մասնավորապես ասաց, որ նշանավոր բանաստեղծ, հասարակական-քաղաքական գործիչ Վահան Տերյանը թեև ստեղծագործել է ընդամենը 15 տարի, սակայն կարողացել է բերել բանաստեղծական նոր ավանդույթներ, գեղարվեստական աշխարհի իր ներքին օրենքները, խորհրդանշանների իր լեզուն, պատկերավորման իր սկզբունքները: Նրա ողջ կյանքն ու գործունեությունն իր ազգի, հայրենիքի ներկայի և ապագայի մասին մտահոգությունների, խորհրդածությունների, որոնումների ճանապարհ էին:

Ողջունելով գիտաժողովի կազմակերպիչներին, մասնակիցներին և հյուրերին՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը նշեց, որ գիտաժողովը կայանում է Վահան Տերյանի ժառանգության գիտական ուսումնասիրության շարունակականության և արդիականության համատեքստում և հնարավորություն է նորովի գնահատելու Վ. Տերյանի դերը հայ գրականության ու մշակույթի զարգացման գործում: Նա հավաստիացրեց, որ նախարարությունը շարունակելու է աջակցել այն բոլոր նախաձեռնություններին, որոնք նպաստելու են հայ մեծ բանաստեղծի ժառանգության հանրահռչակմանը և ուսումնասիրությանը:

Ողջույնի բովանդակալից խոսքերով հանդես եկան՝ Վ. Տերյանի ծոռ, գրականագետ, բ. գ. թ. Գևորգ Էմին-Տերյանը և պ. գ. թ., դոց., ՀՀ ԱԺ պատգամավոր, «Ջավախք» ՀԲՀԿ նախագահ Շիրակ Թորոսյանը:

Գիտաժողովի առաջին նիստը վարում էր Գևորգ Էմին-Տերյանը: Բ. գ. դ., պրոֆ. Դավիթ Գասպարյանը (ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող), հանդես եկավ «Վահան Տերյան-Պողոս Մակինցյան. Անտիպ նամականի» վերնագրով զեկուցումով, բ. գ. դ., դոց. Սուսաննա Հովհաննիսյանը (Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող), ներկայացրեց նորահայտ նյութեր Տերյանի սիրո քնարերգության կենսական ազդակների պատմությունից (Վահան Տերյան և Նվարդ Թումանյան):

---

* *Ներկայացվել է 16. XI. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:*

«Հայկական հանրագիտարան հրատարակչության» գլխավոր խմբագիր և տնօրեն, քիմ. գ. դ. Հովհաննես Այվազյանը հանդես եկավ «Վահան Տերյանը Հովհաննես Թումանյանի և մյուս գրական մեծերի տեսադաշտում» զեկուցմամբ: Բ. գ. դ., պրոֆ. Մադդա Ջանփոլադյանի զեկուցման թեման էր՝ «Վահան Տերյանը Ալբերտ Նալբանդյանի ռուսերեն թարգմանություններում»: Բ. գ. թ. Մարինե Սարգսյանը (Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տեքստաբանության բաժնի գիտաշխատող, փոխտնօրեն) ներկայացրեց «Վահան Տերյանի «Հոգևոր Հայաստան»-ը՝ ազգային ռազմավարություն» խորագրով զեկուցումը: Բ. գ. թ., դոց. Մերի Հովհաննիսյանը (ԵՊՀ գիտական քարտուղար) անդրադարձավ Վահան Տերյանի խոսքարվեստի առանձնահատկություններին, ֆիզմաթ գ. թ. Սպրգիս Գալոյանը՝ Վահան Տերյանի ստեղծագործություններում մահվան թեմային:

Գիտաժողովի երկրորդ նիստը վարում էր Մարինե Սարգսյանը: ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆ. Ալլիտա Դոլուխանյանը (ՀՊՄՀ-ի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ) անդրադարձավ Վ. Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» դասախոսության վերժամանակյա արժեքին, Գևորգ Էմին-Տերյանը ներկայացրեց Տերյանի քաղաքական հայացքները: Բ. գ. դ., պրոֆ. Աշոտ Գալստյանը (ՀՊՄՀ-ի բանասիրական ֆակուլտետի դեկան) հանդես եկավ «Վահան Տերյան բնորդը հուշագրության մեջ. լեզու և կառուցվածք» թեմայով զեկուցմամբ: Բ. գ. թ. Լուսինե Վարդանյանի (Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող) զեկուցումը նվիրված էր Վահան Տերյանի «Երկիր Նաիրի» և Եղիշե Չարենցի «Դոֆին նաիրական» շարքերին: Բ. գ. թ., դոց. Ալիսա Հասանյանը (ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս) անդրադարձավ Տերյանի գրական-քննադատական հայացքներին: Բ. գ. թ., դոց. Թեհմինա Մարությանի (Սյունիքի գիտամշակութային զարգացման հիմնադրամի տնօրեն, Ակսել Բակունցի տուն-թանգարանի գիտաշխատող) զեկուցման թեման էր՝ «Վահան Տերյանի պոեզիայի արևելյան խորհրդաբանությունը», փիլ. գ. թ., դոց. Վարդան Հախվերդյանի զեկուցումը նվիրված էր Վահան Տերյանի էթնոքաղաքական հայեցակարգին: Նիստը եզրափակվեց բ. գ. թ., դոց. Վահան Աղաբաբյանի (ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան) և Հասմիկ Գրիգորյանի (Իջևանի թիվ 3 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի) «Նոր հանրակրթության պետական չափորոշչի կիրառումը «Վահան Տերյան» թեմայի ուսուցման ընթացքում» զեկուցմամբ:

Գիտաժողովի ավարտին ամփոփվեցին արդյունքները, ևս մեկ անգամ ընդգծվեց Տերյանի ժառանգության անտիպ էջերը ձեռք բերելու հարցում գործնական քայլեր ձեռնարկելու կարևորությունն ու անհրաժեշտությունը:

ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՍԿԱՆՅԱՆ

Բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, հայ հին և միջնադարյան գրականության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հին և միջնադարյան գրականություն, հայ դասական գրականություն: Հեղինակ է մեկ մենագրության և 40 հոդվածի:
ORCID:0000-0001-6682-4043. vorskanyan.heriknaz@mail.ru